

սուն աւուր ճանապարհ զնային վասն սիրուն
Քրիստոսի :

Եւ կայր ճզնաւոր մի Ապտալ անուն¹,
յոյժ խրթին, որ բնաւ ձի կամ էչ չէ հեծեալ,
115 այլ ոտիւք շրջէր, վասն Երուսաղէմայ ժողովք
առնելով այլ եւ այլ քաղաքս, բայց Հալապ
նստէր միշտ, մուրար եւ խնդրէր ողորմու-
թիւն սուրբ Երուսաղէմայ. եւ ամենայն ոք սի-
րէր եւ մեծարէր զնա. զի զգեստն չուլ էր,
120 գլխիրաց եւ բոկոտն, ձեռաց մատունք եւ
ծունկք իրրեւ ըզտու պնտացեալս. միշտ ա-
ղօթք եւ ծունր եւ չորասպաք զամենայն ա-
ւուրս. իրեք օրն անգամ մի ուտէր, եւ զայն
բանջար. ոչ վերարկու, ոչ վարախս, ոչ այլ
125 ինչ ունէր, բայց միայն հոլանի առանց զօտոյ
լայն թեղանի ունէր որպէս Տաճկաց աէվրիչքն :
Վասն որոյ մեծ պատիւ առնէին եւ զձեռն պապ-
նէին, զի մեծ ջան եւ զայրաթ առնէր վասն
սուրբ Երուսաղէմի զցայգ եւ զցերեկ, զի տա-
130 բին իրեք հազար, չորս հազար զուռուչ կ'ա-
ռաքէր յԵրուսաղէմ. նա էր թիկունք եւ օղ-
նական Պարոնաէրին : Այլ եւ մարդիկ աշ-
խարհին այն յոյժ ողորմած եւ զթածք են. զի
ոչ միայն զգանձս եւ զինչս, այլ եւ զանձինս

115 յԵրուսաղէմայ : — 132 մարդիք :

¹ Զինքը կը յիշէ նաեւ Գրիգոր Դարանաղցի (536—539). «մեր հայ յԱպտալն... ի Հալապ (էր), եւ ի նուիրակութիւն էր առաքել Գրիգոր եպիսկոպոսն ժողովոց աղապաւ. եւ յետ երկու ամացն երեկ յԵրուսաղէմ» (1626) : Սա՞ է Ապտալ Գրիգորն, որ 1638ին կը յիշուի ի թիւս սարկաւազաց Երուսաղէմի. Աղաւնունի, Միաբանք, էջ 83 :